ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
2013-14 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հաշվետու ժամանակաշրջանում իր գործունեությունն իրականացրել է՝ ելակետ ունենալով մասնաճյուղի՝ 2011-15թթ. ռազմավարական ծրագրի դրույթները: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են եղել մասնաճյուղում բարձրորակ կրթության տրամադրմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, կադրային ներուժի կատարելագործմանը և այլն:

2013-14 ուստարում մասնաճյուղում իրականացվել են առկա ուսուցման 10 բակալավրական և 1 մագիստրոսական, հեռակա ուսուցման 7 բակալավրական կրթական ծրագրեր: Հաշվի առնելով փոփոխվող հասարակական պահանջմունքներն ու տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջները, մարզի դիմորդների նախասիրությունները և ընթացիկ որոշ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության նվազումը՝ ընդունելության մասնագիտությունների ցանկում կատարվել է փոփոխություն. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության փոխարեն հաստատվել է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» /010400/ մասնագիտությունը, «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության փոխարեն հաստատվել է «Էկոլոգիական քիմիա» /020900/ մասնագիտությունը:

Բոլոր մասնագիտությունների համար կատարվել է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերանայում: Առաջնորդվելով ԵՊՀ մեթոդական ուղենիշներով՝ ֆակուլտետներում վերանայվել և բարելավվել են, իսկ նոր մասնագիտությունների համար կազմվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերը, լրամշակվել են ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը»:

Կարևորելով իրականացվող կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը՝ իրականցվել են տարբեր ուսումնասիրություններ՝ հարցումների և հանդիպումների միջոցով (դասավանդման

որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ, մասնաճյուղում ստացած կրթությունից առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների ամենամյա հարցումներ, հանդիպում մարզի գործատուների հետ և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի ուսումնակրթական գործունեությունն իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. ***<u>Որակի ապահովում.</u>***

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կարևորվում են և դեռևս 2009 թվականից ներդրվել են որակի ներքին ապահովման ու որակի մշակույթի ձևավորման գործընթացները: 2009թ. դեկտեմբերի 17-ին ձևավորվել է ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման և վերահսկման գործառույթների կազմակերպման և իրականացման հանձնաժողովը, որը 2010թ. սեպտեմբերի 1-ին վերանվանվել է Որակի կառավարման հանձնաժողով: ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կողմից ընդունվել և հաստատվել է հանձնաժողովի կանոնակարգը: Մշակվել և հաստատվել է նաև ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում Որակի կառավարման հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչների գործունեության կանոնակարգը: Որակի բնագավառում իր քաղաքականությունն արդյունավետ, հաստատուն և նպատակային իրականացնելու համար մասնաճյուղն առաջնորդվում է ***ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով***, կրթության որակի բնագավառում իր քաղաքականությամբ և ձևավորել է որակի ներքին ապահովման իր կազմակերպական կառուցվածքը:

2011 թվականից մասնաճյուղի կրթության որակի ներքին ապահովման գործընթացները Որակի կառավարման հանձնաժողովի հետ միասին համակարգում է Կրթության որակի ապահովման և գնահատման (ԿՈԱԳ) բաժինը, որը 2014թ. վերանվանվեց Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժին: Մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից (2014թ. հունվարի 27) ընդունվեց և հաստատվեց բաժնի կանոնակարգը: Բաժնի հիմնական նպատակը մասնաճյուղում որակի ներքին ապահովման մեխանիզմների մշակումը և ներդրումն է, որակի շարունակական բարելավման խթանումը և կրթական ծառայությունների շուկայում բուհի բարձր մրցունակության ապահովումը: Բաժինը Որակի կառավարման

հանձնաժողովի միջոցով ներդնում է տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման գործիքներ և վերլուծելով ձեռքբերումներն ու բացթողումները՝ աջակցում է մյուս կառույցների հետագա գործունեության բարելավմանը:

Կրթության որակի ապահովման, ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման գործընթացների փաստաթղթային հիմքի ապահովման, հարցումների արդյունքների վերլուծության և համապատասխան գործընթացների բարելավմանը միտված առաջարկությունների ներկայացման, տարբեր խորհրդատվությունների կազմակերպման ուղղությամբ մասնաճյուղում մշակվել և ներդրվել են մի շարք քաղաքականություններ, կարգեր, ձևաթղթեր.

ա) Մասնաճյուղի վերանայված առաքելությունը (28.12.2013թ. ԳԽ): Նոր առաքելությունը ձևակերպված է կրթության որակի ապահովման եվրոպական չափանիշներին համապատասխան՝ ընդգրկելով կարևորագույն տարրերը (հաստատության գործունեության տիրույթը, շնորհվող որակավորումները, դասավանդման և ուսումնառության մոտեցումները): Վերանայված առաքելությունն իր արտացոլումը կգտնի մասնաճյուղի նոր ռազմավարական ծրագրում:

բ) ***ԵՊՀ ԻՄ-ի համալրված գնահատման առանցքային ցուցանիշներն (ԳԱՑ)՝*** ըստ մասնաճյուղի 2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման: Փաստաթուղթն ընդգրկում է մասնաճյուղի վերաբերյալ մեծաքանակ տվյալներ և համապատասխան վերլուծություններ, հանդես է գալիս որպես մասնաճյուղի՝ վերջին 4-5 տարիների գործունեության, ձեռքբերումների, խնդիրների հիմնավորում: Այս վերլուծությունները որոշիչ դեր են խաղալու հաջորդ ուստարվա պլանավորման գործընթացներում:

գ) ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականությունը (28.12.2013թ. ԳԽ), որով մասնաճյուղն ապահովում է որակի ներքին ապահովման գործընթացների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հոսքն ու նրանց արդյունավետ կառավարումը՝ կարգավորելով մասնակիցների ֆինանսական հարաբերությունները: 2014թ. մասնաճյուղի բյուջեում որակի ներքին գործընթացների իրականացման համար առանձին տողով, ըստ մշակված քաղաքականության, հատկացվել է գումար:

դ) ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգը (28.12.2013թ. ԳԽ): Այս փաստաթղթով կանոնակարգվեց մասնաճյուղում բավականին բարեհաջող ներդրված ուսումնական խորհրդատուների ծառայությունը՝ գնահատելով

ուսանողների իրազեկվածությունը և շահագրգռված լինելով նրանց համար ուսանողակենտրոն միջավայրի, ուսումնական գործընթացների խորհրդատվական և նպատակային կազմակերպմամբ:

ե) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքականությունը մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բնագավառում (22.03.2014թ., ԳԽ): Մասնաճյուղը շահագրգռված է և ունի բավարար պայմաններ ու նախադրյալներ արդյունավետ բենչմարքինգի իրականացման և փորձի փոխանակման համար: Նա կարևորում է բենչմարքինգի դերը ողջ ուսումնական գործընթացի մշտադիտարկման գործում.

- գործընթացների պլանավորում,
- տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,
- վերլուծության արդյունքների հիման վրա համապատասխան գործընթացների իրականացում,
- ձեռքբերած արդյունքների չափում, դիտարկում և գնահատում:

Մասնաճյուղը գիտակցում է, որ բենչմարքինգն առաջին հերթին սեփական ցուցանիշների համեմատումն է այլ առաջատար, մրցակից հաստատությունների ցուցանիշների հետ, երկրորդը՝ ուրիշ հաստատությունների լավագույն, հաջողված փորձի ուսումնասիրումն ու կիրառումը սեփական հաստատությունում: Մասնաճյուղի տարբեր բաժինների աշխատակիցներ և դասախոսներ գործուղվում են տարբեր բուհեր՝ համապասխան բաժինների աշխատանքների ուսումնասիրման, գնահատման և անհրաժեշտության դեպքում մասնաճյուղում այդ գործընթացների բարելավման համար:

զ) ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում (27.05.2014թ., ԳԽ): Այս քաղաքականության պատշաճ իրականացումը կապահովի մասնաճյուղի բարձր վարկանիշը տարածաշրջանում և հանրապետության բուհերի համակարգում, կնպաստի մասնաճյուղում ուսանողների թվի աճին և բարձր որակավորում ունեցող մասնագետի, հայրենասեր ու պատասխանատու քաղաքացու պատրաստմանը, որը կունենա կարևոր դերակատարություն մարզի և ՀՀ հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Այս փաստաթղթի ստեղծման գործում ամբողջությամբ ներգրավված է եղել մասնաճյուղի հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն:

է) ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կանոնակարգ, դասի գնահատման հարցաթերթ և դասալսման արդյունքների վերլուծության ձևաթերթ (22.05.2014թ., ԳԽ): Այս փաստաթղթով կանոնակարգված են մասնաճյուղում պարբերաբար իրականացվող դասալսումները, բաց դասերը և փոխադարձ դասալսումները: Դասալսումն ուսումնական պրոցեսի որակի նպատակային կատարելագործման մեխանիզմ է և մտնում է դասավանդողի անհատական պլանի մեջ՝ ուսումնամեթոդական աշխատանքների բաժնում: Փաստաթուղթն ունի հավելվածներ՝ դասի գնահատման հարցաթերթ և դասալսման արդյունքների վերլուծության ձևաթուղթ: Այդ ձևաթղթերը միջոց են դասալսման արդյունքների բազմակողմանի և նպատակային գնահատման համար: Դրանք բնութագրելու են դասախոսի՝ դասընթացի վարման, բովանդակության, դասին ուսանողների ներգրավվածության, խմբային աշխատանքների իրականացման կարողությունները և գնահատելու են համապատասխան սանդղակով: Դասալսման արդյունքների վերլուծության ձևաթղթում դասալսողը ներկայացնում է իր կարծիքը դասապրոցեսի կազմակերպման, դասախոսի կողմից կիրառված մեթոդների և դրանց արդյունավետության, նորարարական փորձի վերաբերյալ, ապա կատարում իր դիտողություններն ու առաջարկները:

ը) ԵՊՀ ԻՄ-ի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվության ձևաթուղթ: Թեև մասնաճյուղում գործող ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններում նախագահներն անդրադառնում են տվյալ մասնագիտության շրջանավարտների տեսական և գործնական պատրաստվածության մակարդակին, կատարում են ամբիոններում մասնագիտական գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ, սակայն դրանք սուբյեկտիվ կարծիքներ են և շատ դեպքերում չեն ներառում ժամանակակից կրթական պահանջներին, դուբլինյան նկարագրիչներին համապատասխան մոտեցումներ և վերլուծություններ: Նշված պահանջներին համապատասխան հաշվետվություններ ունենալու նպատակով բաժինը մշակել է հաշվետվության նոր տարբերակ: Այն ուղղորդում է, թե հաշվետվություն գրելիս ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներն ինչ տեսակետների պետք է ուշադրություն դարձնեն, շրջանավարտների որ ձեռքբերումների և բացթողումների մասին բարձրաձայնեն: Հաշվետվության մեջ ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ստացած ուսումնառության ընդհանրական արդյունքների

մակարդակի վերաբերյալ, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ և առաջարկություններ՝ դրանց հետագա բարելավման ուղղությամբ:

թ) Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման համար՝ ***հետազոտման գործիքի անձնագիր***: ՄԿՈԱ բաժնի կողմից վերանայվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ***ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթը,*** առաջին անգամ հարցման իրականացման համար մշակվել է նաև ***հետազոտման գործիքի անձնագիրը***, որը ներկայացնում է հետազոտման ընդհանուր նպատակը, խնդիրները, տալիս է կապը մասնաճյուղի ռազմավարական նպատակի հետ, հիմնավորում է ընտրված մեթոդը, ընտրանքը, կիրառման պարբերականությունը և այլն: Լրամշակվել է նաև Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի «Շրջանավարտի գրանցման թերթիկ»-ը, որի տվյալները կենտրոնին անհրաժեշտ են լինելու շրջանավարտների հետ հետադարձ կապն ապահովելու, նրանց աշխատանքի տեղավորելու գործընթացին աջակցելու, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու համար:

ժ) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ (27.01.2014թ., ԳԽ),

ի) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհրդի կանոնակարգ (27.01.2014թ., ԳԽ),

լ) Դասախոսների համար «Առարկայական փաթեթ (պորտֆոլիո)» կազմելու մեթոդական ուղեցույցի մշակում: Առարկայական փաթեթների ներմուծումը նպատակ ունի համակարգել դասախոսի գործունեությունը յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, պլանավորել դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացնել դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, կազմակերպել անհրաժեշտ փաստաթղթերի նպատակային հավաքագրում, որը ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի (ռեֆլեքսիայի) միջոց և նրա արդյունքների ներկայացումը՝ որպես կոմպետենտության ընթացիկ գնահատման կամ մրցունակության ցուցադրման միջոց: Այն կիսամյակի վերջում արտացոլում է

դասախոսի և ուսանողների գործունեությունը, ներկայացնում ամրագրված մեխանիզմները, առանձնացնում դրանցից արդյունավետները, կամ նշում նրանք, որոնք իրենց չեն արդարացրել: Դասընթացի փաթեթի արդյունավետ կազմման համար բաժնի կողմից դասախոսներին տրամադրվել են ևս երկու մեթոդական ուղեցույցներ (***Ուսումնառության արդյունքների պլանավորման և Կրթական վերջնարդյունքների գնահատման):***

Ուսումնառության արդյունքների պլանավորման ուղեցույցում ներկայացվում են ԵՊՀ ԻՄ-ի դասընթացի փաթեթի մշակման ժամանակ դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնադրույթները և այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն ԵՊՀ ԻՄ-ի դասավանդողները դրանց ձևակերպման ժամանակ:

Կրթական վերջնարդյունքների գնահատման ուղեցույցում ներկայացված են ուսանողի կրթական վերջնարդյունքների և ձեռքբերումների մակարդակը տարակարգելու հստակ չափանիշներ, նշված են կրթական վերջնարդյունքների գնահատման համար համարժեք մեթոդները և ցուցիչները, բերված են բնութագրիչ օրինակներ: Արդյունավետ գնահատումն անհրաժեշտ է ուղղակիորեն կապել կրթական արդյունքների հետ: Գնահատման տարբեր ձևերը և ուսանողի ու դասախոսի համագործակցությունն այդ գործընթացում աջակցում են միկրոեղանակի ձևավորմանը, նվազեցնում հակասական իրավիճակների քանակը, ուսանողին սովորեցնում արդարացի գնահատել իր ձեռքբերումները, դիտողությունների, սխալների նկատմամբ լինել համբերատար և իրեն դրսևորել համապատասխան ձևով:

2012-13թթ. ԵՊՀ-ում իրականացվեց ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում: ԵՊՀ-ի հետ միասին մասնաճյուղը ևս նախաձեռնեց ինքնագնահատման գործընթացը՝ գնահատելու իր գործունեության արդյունավետությունն ըստ ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծման չափանիշների, վերհանելու ձեռքբերումները, նշելու բացթողումները, առաջարկելու դրանց բարելավման ուղիներ: Կազմված աշխատանքային խումբը կատարել է մասնաճյուղի գործունեության ինքնավերլուծություն, ապա կատարված վերլուծությունը ներկայացրել հանրությանը: 2013թ. հունիսի 19-ին մասնաճյուղի 4 աշխատակիցներ և 2 ուսանողներ տնօրենի հետ միասին ներկայացրել են մասնաճյուղը ԵՊՀ-ում փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբին: Հունիսի 24-ին փորձնական ինստիտուցիոնալ

հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խումբը այցելել է մասնաճյուղ: Ըստ ժամանակացույցի՝ խումբը հանդիպումներ է ունեցել մասնաճյուղի կառավարման միջին օղակի ներկայացուցիչների, ԿՈԱԳ բաժնի և ինքնավերլուծություն իրականացնող խմբի անդամների, դասախոսների, ուսանողների հետ, ուսումնասիրել մասնաճյուղի փաստաթղթերը: Նրանք հարցերի միջոցով պարզել են, թե որքանով է արդյունավետ կառավարվում ուսումնական հաստատությունը, ինչ մակարդակի վրա են կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները, արդյոք մասնաճյուղում ձևավորված է որակի մշակույթ, կրթական միջավայրը նպաստում է աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսանողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, ապահովվում են ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիությունը, մրցունակությունը, թափանցիկությունը և այլն:

Խմբի անդամներն ընդհանուր առմամբ գոհ էին մնացել հանդիպման արդյունքներից: Մասնաճյուղի վերաբերյալ փորձագիտական խմբի վերջնական ամփոփումը ներկայացվել է ԵՊՀ արդյունքների հետ միասին, որում մասնավորապես նշվել է, որ առկա են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից ԵՊՀ որակի ապահովման քաղաքականության իրականացման բավականաչափ ցուցիչներ. առանձին դեպքերում մասնաճյուղը գտնվում է առջևում:

Այս գործընթացը շարունակական է, և հաշվետու ժամանակահատվածում առկա է նրա ազդեցությունը մասնաճյուղի գործունեության վրա: Ինքնավերլուծության շրջանակներում կատարված SWOT վերլուծություններից դուրս են գրվել թույլ կողմերը, մշակվել դրանց բարելավման մեխանիզմներ:

ԵՊՀ ԻՄ-ում կրթության շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններ են արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումները:

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների, մանկավարժական հմտությունների գնահատման և բարելավման, առաջավոր փորձի փոխանցման և տարածման համար մասնաճյուղում պարբերաբար իրականացվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները: 2013-14 ուստարվա 2 կիսամյակների հարցման արդյունքները հետևյալն են.

Ֆակուլտետի անունը	Հարցման արդյունքները /2013-14 ուստարի/
Բնական գիտությունների ֆակուլտետում	**4,51**
Տնտեսագիտության ֆակուլտետում	**4,61**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետում	**4,62**
Կիրառական արվեստի ֆակուլտետում	**4,74**



Հարկ է նշել, որ այս արդյունքները գրեթե բոլոր ամբիոնների համար նախորդ ուստարվա համեմատ բարելավվել են և բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորը բարձր է 4.5-ից:

ԵՊՀ ԻՄ-ում 2014թ. մայիս-հունիս ամիսներին առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների համար իրականացվել է ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցում: Գնահատվել է՝

- կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից շրջանավարտների բավարարվածությունը.



- մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից շրջանավարտների բավարարվածությունը.



Հաշվետու ուստարում ևս անց է կացվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրության հարցում: Այդ հարցումները նպատակ ունեն պարզելու արտաքին շահակիցների գնահատականը ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկանտ-ուսանողների ձեռք բերած

տեսական, պրակտիկ գիտելիքների, գրագիտության, էթիկայի պահպանման և վարվեցողության, ստեղծագործական ունակությունների և ժամանակակից մեթոդների կիրառման հմտությունների վերաբերյալ: Հարցումների արդյունքները համակարգվել են, նախորդ հարցումների հետ վերլուծվել, տրվել համապատասխան ֆակուլտետներին՝ պրակտիկաների արդյունավետ կազմակերպման համար իրենց հետագա գործունեությունը պլանավորելու նպատակով:



Կրթության որակի ապահովման և բարելավման կարևորագույն պայմաններից է շրջանավարտների կարիերայի աջակցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը: Այդ գործընթացը համակարգվում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով: Կենտրոնում 2014թ. ներդրվել է շրջանավարտների հաշվառման ծրագրային համակարգ, որտեղ ներառված են վերջին 5 տարիների շրջանավարտների տվյալները: Այն հնարավորություն է տալիս գործատուների հետ համագործակցության շրջանակներում ներգրավել համապատասխան որակավորման շրջանավարտների: 2014թ. մասնաճյուղում տեղի են ունեցել հանդիպումներ մարզի գործատուների հետ, որտեղ քննարկվել և բացահայտվել են (նաև անանուն հարցման միջոցով) մասնաճյուղի շրջանավարտների տեսական ու գործնական պատրաստվածության վերաբերյալ խնդիրները, նշվել մեր շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, մասնագիտական գիտելիքների կիրառման կարողությունների մակարդակը, գրագետ հաղորդակցման, առաջադրված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության ունակությունները, մասնագիտական

գրականությունից օգտվելու կարողությունները: 2014թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամ-գործատուների շրջանում նույնպես անց է կացվել հարցում՝ իրենց մոտ աշխատող մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և մարդկային որակների վերաբերյալ: Այդ հանդիպումների ժամանակ նշվել են մեր շրջանավարտների որոշակի թերություններն ու առավելությունները: Գործատուների հետ հանդիպումների ժամանակ ընդունվել են մի շարք գործնական որոշումներ հետագայում նպատակային պրակտիկաների, կուրսային և ավարտական աշխատանքների թեմատիկայի ընտրության և իրականացման գործում արտաքին շահակիցների (գործատուների) անմիջական մասնակցության ապահովման ուղղությամբ: Գործատուների հետ հանդիպումները լուսաբանվել են հանրային հեռուստատեսությամբ, մասնաճյուղի կայքէջում զետեղված է գործատուների հետ համագործակցության կազմակերպման ձևաչափը:

Գործատուների շրջանում վերոնշյալ երկու հարցումների ընդհանրական վերլուծության արդյունքները ներկայացված են հետևյալ դիագրամում.



Մասնաճյուղում շարունակվում են կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության համակարգված ուսումնասիրման համար նոր ձևերի և գործիքների մշակման գործընթացները:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից մշակվել, դասախոսների և ուսանողների քննարկմանն են ներկայացվել գնահատման համակարգերի նախագծերը, որոնցով գործնական, լաբորատոր, սեմինար

դասընթացներից և ինքնուրույն աշխատանքներից ուսանողի ձեռքբերումների գնահատման միջոցով են ձևավորվում արդյունարար գնահատականի բաղադրամասերը: 2014-15 ուստարում մի քանի դասախոսներ այդ նախագծերը կփորձարկեն ամփոփման տարբեր ձևեր ունեցող դասընթացների համար: Որոշ դասընթացների շրջանակներում փորձարկվել են ինքնուրույն աշխատանքների դերի բարձրացման և գնահատման տարբեր մեխանիզմներ: Մշակման փուլում է գտնվում նաև ինքնուրույն աշխատանքների կազմակերպման ու գնահատման կանոնակարգը:

Ուսանողների, դասախոսների, արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման նպատակով ԵՊՀ ԻՄ-ի դասընթացների, կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման գործընթացները, նրանց բարելավմանն ողղված միջոցառումներն ու արդյունքները լուսաբանվում են մասնաճյուղի կայքէջում:

1. *Ուսումնական գործընթաց*

ա) Ընդունելություն

Մարզի հասարակայնության շրջանում լիարժեք տեղեկատվություն ապահովելու նպատակով մասնաճյուղը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ՝ նպատակ ունենալով ոչ միայն պահպանել, այլև ընդլայնել ընդունելության համակազմը, ինչը մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի առանցքային դրույթներից մեկն է: Մասնաճյուղն ունի պայմանագիր մարզի 4 ավագ դպրոցների, բոլոր քոլեջների և Արարատի քոլեջի հետ: Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի պլանավորմամբ և կազմակերպմամբ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներն այցելում են մարզի դպրոցներ: Այդ այցելությունները նպատակաուղղված են դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը, տալիս են կրթօջախում ուսուցանվող մասնագիտությունների և դասընթացների մասին ամբողջական տեղեկատվություն: Դասախոսները ակնարկային դասախոսություններ են կարդում աշակերտների համար, տալիս են անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր

և մարտ ամիսներին կազմակերպվում են բաց դռների օրեր՝ ծնողների և մասնաճյուղի դասախոսական կազմի, ղեկավարության հետ ազատ շփում ապահովելով:

Ընդունելության մարքեթինգային գործընթացների արդյունավետ իրականացման գործում իր ուրույն դերն ունի մասնաճյուղի կայքէջը, որում տեղադրվում է տարաբնույթ տեղեկատվություն մասնագիտությունների, ուսումնական գործընթացի և ուսանողական միջավայրի, դասավանդողների և նրանց գիտական ու մանկավարժական գործունեության, մասնաճյուղի տեխնիկական ապահովվածության վերաբերյալ: Մասնաճյուղի գործունեությունը պարբերաբար լուսաբանվում է տեղական և հանրային հեռուստատեսությամբ:

Մասնաճյուղն օգտվում է ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ից, որն անվճար տրամադրվում է մարզի հանրակրթական հաստատություններին:

2013-14 ուստարում ԵՊՀ-ի հետ համատեղ դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար մասնաճյուղի դասախոսների և ուսանողների անմիջական մասնակցությամբ կազմակերպվել են հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաներ, որոնց մասնակցել են մարզի 4 ավագ դպրոցների և 23 միջնակարգ դպրոցների 257 աշակերտներ, տարբեր պարգևատրումներ են ստացել 20 աշակերտներ, որոնցից 3-ը՝ 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ:

2013-14 ուստարում մասնաճյուղի առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների գծով բակալավրիատ ընդունվել է 205 ուսանող (39-ը՝ անվճար, 166-ը՝ վճարովի), մագիստրատուրա՝ 4 (2-ը՝ անվճար, 2-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով բակալավրիատ ընդունվել է 190 դիմորդ: Նշենք, որ առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 27-ով գերազանցում է նախորդ ուստարվա ընդունելությանը, իսկ հեռակա ուսուցման համակարգում նկատվել է դիմորդների քանակի նվազում:

Կրթական համակարգի զարգացման գործընթացում կարևորվում է նաև շարունակական կրթությունը: Մասնաճյուղն ապահովում է մի շարք քոլեջների լավագույն շրջանավարտների մասնագիտական կրթամակարդակի բարձրացումը՝ դրանով նաև ավելացնելով դիմորդների հոսքը:

Իրականացվել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա առաջին կուրսի և ԵՊՀ ԻՄ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

բ) Կազմակերպում

Ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման ուղղությամբ մասնաճյուղում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնաճյուղում պարբերաբար գնահատվում է լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատորիաների վիճակի համապատասխանությունը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին:

Թիվ	Անվանումը	Ընդամենը	
		քանակը	մակ./քառ.մ/
1.	Լսարան	38	
2.	Համակարգչային սրահ	4	
3.	Մասն. լաբորատորիա	2	
4.	Լեզվի ուսուցման կենտրոն	2	
5.	On-line լսարան	1	
6.	Արվեստանոց	13	
7.	Մարզադահլիճ	2	382.6
8.	Գրադարան	2	163.0
9.	Դեկանի սենյակ, դեկանատ	8	170.2
10.	Ամբիոնային սենյակ	10	153.0
11.	Բուժ. կետ	1	10.0
12.	Անցակետ	1	5.0
13.	Սան.հանգույց	12	130.0
14.	Կաթսայատուն	2	25.0
15.	Պահակակետ	2	12.0
16.	Հյուրանոցային համալիրում հյուրասենյակ	11	205.2
17.	Հեռակա բաժնի աշխատասենյակ	3	45.2
18.	Շրջանավ. և կարիերայի կենտրոն	1	10
19.	ՈւԽ, ՈԻԳ սենյակ	1	16
20.	Արխիվ	1	30
21.	Պահեստ		
22.	Վարչական աշխատասենյակներ		
Ընդամենը		117	

2013-14 ուստարին լիարժեք դիմավորելու համար կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների տեխնիկական վերազինման և վերանորոգման աշխատանքներ, պլանավորվել է դրանց նպատակային և կանոնավոր օգտագործումը:

N	*Շին.վերանորոգման աշխ.անվանումը*	*Քանակը*
1	Լսարանների վերանորոգում	22

2	Արվեստանոցների վերանորոգում	4
3	Լաբորատորիաների վերանորոգում	1
4	Դեկանների աշխատասենյակների վերանորոգում	1
5	Դեկանատների սենյակների վերանորոգում	
6	Ամբիոնային սենյակների վերանորոգում	1
7	Ստորաբաժանումների սենյակների վերանորոգման աշխատանքներ	2
8	Համակարգչային սրահների վերանորոգում	2
9	Միջանցքների,աստիճանավանդակների,նրանց հատակների սալիկապատման աշխատանքներ	6
10	Մասնաշենքերի բակերի և շրջակա տարածքների ց/բ. սալիկապատ հատակների պատրաստում	2
11	Մասնաճյուղի մասնաշենքերի սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ	4
12	Հյուրանոցային համալիրի, ջեռուցման համակարգերի,բուժ.կետի,պահակատան,էլեկտրոմոնտաժման և պահեստի վերանորոգման աշխատանքներ	3

Ձևավորված է տեխնոլոգիական կարողությամբ էլեկտրոնային (On-line) ուսուցման 1 լսարան, տեսասարքով ապահովված 2 լսարան, 3-րդի ձևավորման աշխատանքներն ընթացքի մեջ են, գործում է 3 համակարգչային սրահ, 4-րդ սրահի ձևավորման աշխատանքները ընթացքի մեջ են, այդ սրահներում գործում է ներքին միասնական ցանց: Հիմնվել են անգլերենի և ֆրանսերենի մասնագիտական լսարաններ:

ԵՊՀ ԻՄ-ում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է մասնաճյուղի համակարգիչների մեծ մասը (122 համակարգիչ): Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումները, համակարգչային սրահները և գրադարանը ապահովված են անվճար ինտերնետ կապով:

Մասնաճյուղը 2013-14 ուստարին սկսել է արդյունավետ ուսումնառության համար անհրաժեշտ կրթական բոլոր գործընթացների և համապատասխան գործիքակազմի ապահովմամբ: Ուսումնական տարվա սկզբից մասնաճյուղը բոլոր ֆակուլտետների առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների համար ապահովել է վերանայված և լրամշակված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» ձեռնարկները, ֆակուլտետներն ապահովել են իրենց մասնագիտությունների համար կրթական

վերջնարդյունքներով սահմանված կրթական ծրագրերը (13 մասնագիտությունների մասնագրերը) և առարկայական ծրագրերը:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը պայմանավորված է նաև ԵՊՀ-ի կողմից մշակված Վեբ հենքով էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» ծրագրի առկայությամբ: Համակարգի միջոցով իրականցվում է ուսումնական պլանների, ամբիոնների և դասախոսների բեռնվածության ավտոմատ մշակում, ուսանողների ուսումնական տվյալների հավաքագրում, մշակում և առաջադիմության վերահսկում, որը նաև որպես հիմք է ծառայում ուսանողական զեղչերի, փոխատեղումների իրականացման ժամանակ, պատրաստում դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելված:

Մասնաճյուղի դեկանատներում ներդրված է նաև ուսանողների հաճախումների հաշվառման, քննական արդյունքների մշակման, դասացուցակի ներմուծման և դասաժամի իրավիճակի հաշվառման տվյալների բազա: Համակարգը հնարավորություն է տալիս ամբողջ կիսամյակի ընթացքում իրականացնել ուսանողների հաճախումների հաշվառում, կիսամյակային քննական գնահատականների հաշվառում և ամփոփում, կիսամյակային դասացուցակի ներմուծում, խմբագրում և տարբեր պահանջներին համապատասխան դասացուցակների ստացում, ֆակուլտետում ընթացիկ դասաժամի իրավիճակի ֆիքսում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2014թ. 2-րդ կիսամյակում մշակվել է «Դասընթացի փաթեթ»–ի (պորտֆոլիո) կազմման մեթոդական ուղեցույցը, որի հիման վրա բոլոր դասախոսները կազմելու են մեկական փաթեթ: Կրթական գործընթացում կիրառվող այդ ժամանակակից տեխնոլոգիան դասախոսի՝ որոշակի ժամանակահատվածի գործունեության և ձեռքբերումների հավաքածու է, որը բովանդակում է դասընթացի պլանավորման և իրականացման անհրաժեշտ նյութերը, դասավանդողի և ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը: Փաթեթի փաստաթղթերը, ըստ բովանդակության և ժամանակագրության, հավաքագրվելու են դասընթացը սկսվելուց առաջ, դասընթացի իրականացման ընթացքում և դասընթացի ավարտից հետո:

Ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկը պրակտիկան է, որի ճիշտ կազմակերպումն ու արդյունավետ անցկացումը կրթության որակի գրավականներից է: Հաշվետու ուստարում նախապատրաստական աշխատանքներից հետո ուսումնական

պլաններով նախատեսված պրակտիկաներն իրականացնելու համար համալսարանը տարբեր պետական և ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքել է 28 պայմանագրեր, որոնց համապատասխան՝ կազմակերպվել են ուսումնական, արտադրական ու մանկավարժական պրակտիկաներ:

Ուսումնական և ճանաչողական պրակտիկաների շրջանակներում մասնաճյուղն աջակցում է ուսանողներին կատարել նաև այցելություններ համապատասխան կազմակերպություններ: Հաշվետու ուստարում «Սերվիս» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները այցելել են Դիլիջանում հայ գործարար Ջեյմս Թուֆենկյանի հիմնադրած «Հին Դիլիջան» («Old Dilijan») հյուրանոցառեստորանային համալիր և Հաղարծնի վանք:

Տնտեսագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները ճանաչողական պրակտիկայի շրջանակներում այցելել են ՀՀ կենտրոնական բանկ և Երևանի կոնյակի գործարան:

2013թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի գործարար համաժողով, որի շրջանակներում ձեռք բերվեցին տնտեսական-մշակութային և կրթական համաձայնություններ: Ձեռք բերվեց նախնական համաձայնություն՝ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների պրակտիկան Ֆրանսիայի Մարսել քաղաքի բանկերում և արդյունաբերական ձեռնարկություններում անցկացնելու վերաբերյալ, որն առաջընթաց է և լուրջ պատասխանատվություն, որովհետև պրակտիկայի կազմակերպման պարտադիր պայմաններից է ուսանողների՝ ֆրանսերեն լեզվին տիրապետումը և մասնագիտական բարձր պատրաստվածությունը:

Համապատասխան փաստաթղթերով կանոնակարգվել են ամբիոնների աշխատանքները, կամընտրական դասընթացների ընտրությունը, ուսանողների և դասախոսների համագործակցության մեխանիզմները, ժամանակացույցները և այլն:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով ուսումնական բոլոր գործողություններն իրականացվել են ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ կանոնակարգերին ու պահանջներին համապատասխան:

Մասնաճյուղում իրականացվել է ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթաց՝ համաձայն ԵՊՀ-ում գործող կարգի և կրթության որակի ապահովման չափանիշների: Հաշվետու ուստարում ոսանողական նպաստներ, պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 112 ուսանողների՝ այդ թվում 1-ին կուրսի 39, 2-րդ կուրսի՝ 30, 4-րդ կուրսի՝ 43 ուսանողների: Անվանական կրթաթոշակ են ստացել 4 ուսանող: 1-ին կիսամյակում զեղչվել է առկա ուսուցմամբ համակարգի 73 ուսանողների, իսկ հեռակա ուսուցման համակարգի՝ 60 ուսանողների ուսման վարձավճարները, իսկ 2-րդ կիսամյակում համապատասխանաբար՝ 97 և 69:

<u>գ) Ուսանողական համակազմ և շրջանավարտներ</u>

Հաշվետու ուստարում մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում սովորել են 1551, մագիստրատուրայում՝ 13 ուսանողներ, որոնցից 1432-ը՝ վճարովի ուսուցման համակարգում:

2013-14 ուստարում մասնաճյուղը տվել է 403 շրջանավարտ, որոնցից 226-ը՝ առկա ուսուցման համակարգից, 9-ը՝ մագիստրատուրայից, 177-ը՝ հեռակա ուսուցման համակարգից:

Մասնաճյուղի առկա ուսուցման բակալավրիատի 34 (15%) և մագիստրատուրայի 4 (45%) շրջանավարտներ ուսումնառությունն ավարտել են գերազանցության դիպլոմով:

Կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման գործընթացը: Ամփոփվել և ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: 2014թ. ՄԿՈԱ բաժինը մշակել է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողի հաշվետվության նոր տարբերակ, որը նախագահներին ուղղորդում է ուսանողների տեսական և գործնական պատրաստվածության մակարդակի վերաբերյալ իրենց կարծիքները և առաջարկությունները նշելուց բացի ներառել ժամանակակից կրթական պահանջներին, դուբլինյան նկարագրիչներին համապատասխան մոտեցումներ և վերլուծություններ: Ձևաթերթը ներառում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կարծիքը շրջանավարտների ստացած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների

ներկայացման հմտությունների վերաբերյալ: Ձևաթերթն ունի նաև առաջարկությունների բաժիններ, որտեղ նախագահները գրելու են իրենց առաջարկները շրջանավարտների ստացած ուսումնառության ընդհանրական արդյունքների հետագա բարելավման, ավարտական աշխատանքների ժամանակակից թեմաների ընտրության, շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ: Այդ հաշվետվությունները ներկայացվում են ՄԿՈԱ բաժին վերլուծության և թերությունների ու ձեռքբերումների համակարգման համար, որպեսզի, ըստ առկա հիմնախնդիրների, ամբիոնները պլանավորեն, թե շրջանավարտների որ ձեռքբերումներին և բացթողումներին պետք է ուշադրություն դարձնեն և բարձրաձայնեն:

Հաշվետու ուստարում հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու ուստարում ոսանողական նպաստներ, պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 112 ուսանողների: Անվանական կրթաթոշակ է ստացել 4 ուսանող: 1-ին կիսամյակում զեղչվել են առկա ուսուցման համակարգի 73, հեռակա ուսուցման համակարգի 60 ուսանողի ուսման վարձավճարները, 2-րդ կիսամյակում՝ համապատասխանաբար 97 և 69:

«SuperVision YSU» ծրագրի միջոցով մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչությունը շարունակաբար իրականացնում է առաջադիմության վերահսկման աշխատանքներ՝ զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անաչառ կազմակերպելու նպատակով: Բաժինը պարբերաբար վերահսկում և հետևում է քննությունների արդյունքների ավտոմատ մշակման համակարգից ֆակուլտետների դեկանատների աշխատակիցների օգտվելու հմտությունների զարգացմանը:

դ) Դասախոսական կազմ

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 107 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.6%), 32 դոցենտ (26.1%), 72 ասիստենտ և դասախոս (71.3%), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 50

թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը հասել է 50%-ի:

Վերջին տարում հիմնական և համատեղությամբ աշխատող երիտասարդ դասախոսների ավելացման հետևանքով միջին տարիքը դարձել է 48. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 30 է (28%), 36-65 տարեկան՝ 68 (63.6%), 65-ից բարձր՝ 9 (8.4%): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 57% -ը (61):

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2013-14 ուստարում կազմել է 20.54 (նախորդ ուստարում՝ 17.27):

Դասախոսների միջին տարեկան ուսումնական բեռնվածության համալսարանական միջինը հաշվետու ուստարում կազմել է 770 ժամ (նախորդ ուստարում՝ 693 ժամ):

Թիվ	Ամբիոնի անունը	Ամբիոնի ժամաքանակը			Ամբիոնի բեռնված.	
		առկա	հեռակա	Ընդհա-նուր	Հաստիք	Դաս. միջ. բեռնվ.
1.	Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	3652	1862	5514	*7.25*	*760.6*
2.	Ընդհանուր ֆիզիկայի	1077	1327	2404	*3*	*801.3*
3.	Անտառագիտության	1595	1363	2958	*3.25*	*910.2*
4.	Պատմության և քաղաքագիտության	4728	3454	8182	*10.25*	*798.2*
5.	Հայոց լեզվի և գրականության	4822	3308	8790	*8.5*	*956.5*
6.	Մանկավարժության և հոգեբանության	2669	3021	5690	*7.5*	*758.7*
	Օտար լեզուների	10929	2076	13005	*19.5*	*666.9*
7.	Ընդհանուր տնտեսագիտության	2660	2721	5381	*6.25*	*861*
8.	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	2863	825	3688	*5.25*	*702.5*
9.	Գծանկարի, գունանկարի և քանդակի	3166			*4.5*	*703.6*
10.	Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	2786	131	2917	*4.25*	*686.4*
11.	Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի	1374			*2*	*687*
Ընդամենը մասնաճյուղում՝		***42321***	***20088***	***62409***	***81.5***	***765.8***

<u>ե) Գիտական գործունեություն, որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում</u>

Մասնաճյուղն իր կադրային ներուժով ձգտում է իր առանձնահատուկ տեղն ապահովել տարածաշրջանում և արդարացնել մայր բուհի ակնկալիքները: Նա կարևորում և աջակցում է դասախոսական կազմի գիտամանկավարժական արդյունավետ գործունեությանը:

Հաշվետու ուստարում թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել մասնաճյուղի 6 երիտասարդ դասախոսներ (նրանցից 2-ը մասնաճյուղի նախկին շրջանավարտներ են), որին նպաստում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: 1 դասախոս դարձել է ՀՀ նկարիչների միության անդամ: 18 երիտասարդ դասախոսներ ԵՊՀ-ում և այլ բուհերում ձևակերպվել են որպես ասպիրանտներ և հայցորդներ:

Մասնաճյուղի դասախոսների գիտական գործունեության հիմնական ցուցանիշներ են նրանց գիտական հրատարակությունները: Հաշվետու ուստարում դասախոսների կողմից հրատարակվել են 6 մենագրություն, 9 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 98 գիտական հոդված և 15 զեկուցումների թեզիս:

Մասնաճյուղի 10 դասախոսներ (հիմնականում ԵՊՀ հրավիրված) ընդգրկված են եղել հետազոտական տարբեր նախագծերում:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հ.Մարզպանյանը և ասիստենտ, տ.գ.թ. Գ.Սիրոյանը 2012թ. հոկտեմբերից մինչև 2014թ. նոյեմբերն ընգրկված են եղել Շվեյցարիայի Ֆրայբուրգի համալսարանի կողմից միցութային կարգով տրամադրված դրամաշնորհային ծրագրում՝ «Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում» թեմայով: Ծրագրի աշխատանքներում ընդգրկված են եղել նաև Տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսերի 6 ուսանողներ՝ իրենց կուրսային աշխատանքերի համապատասխան թեմատիկայով:

ԵՊՀ-ի հետ համատեղ մասնաճյուղը նույնպես ընդգրկված է հարատև ուսումնառության ապահովմանը միտված ծրագրերի իրականացման մեջ: Այդ կարևորագույն ռազմավարական նպատակին է ուղղված «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» հնգամյա ծրագիրը, որը, որպես լրացուցիչ կրթության իրականացում, քայլ է դեպի հարատև կրթության մշակույթի ձևավորումը: Մասնաճյուղի դասախոսները այդ կրթագիտական ծրագրի շրջանակներում շարունակում են հավաքել սահմանված կրեդիտները՝ մասնակցելով մայր բուհի աջակցությամբ ու սեփական նախաձեռնությամբ մասնաճյուղում պարբերաբար իրականացվող որակավորման բարձրացման դասընթացներին: Հաշվետու ուսումնական տարում որակավորման բարձրացում են անցել 95

դասախոսներ՝ մասնագիտական, մանկավարժական, համակարգչային և այլ ուղղություններով՝

Կրթա-մաս	Մոդուլի անունը	Վերապատրաստման դասընթացի անունը	Վերապատրաս-տումն անցած դասախոսների թիվը
Ա	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	«Լսարանային ցուցադրությունների պատրաստում» (PowerPoint)	4
		Ուսուցողական Case-փաթեթ	1
		Անգլերենը ակադեմիական միջավայրում	3
Ա	Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն	«Դասավանդման ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ»	70
		«Կրթական ծրագրերի մշակման հիմունքներ»	52
		Մանկավարժական հոգեբանություն	1
Ա	Որակավորման բարձրացման այլ ձևեր (վերապատրաստում, ստորաբաժանում, ամառային դպրոց)	Վերապատրաստումներ	4

Այս համակարգում ընդգրկված են մասնաճյուղի բոլոր հիմնական աշխատողները, կրեդիտների կուտակումը խթանել է նրանց գիտական գործունեությունը, մասնագիտական որակավորման բարձրացման ձգտումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունների բարելավումը:

Քանի որ մասնաճյուղը հիմնականում իրականացնում է բակալավրիական կրթություն, ուստի հետազոտական նախագծեր, գիտահետազոտական ծրագրեր չեն իրականացվում, սակայն մասնաճյուղի դասախոսներն ակտիվ մասնակցում են հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, գիտական ծրագրերի, որոնց մի մասը կազմակերպվել է մասնաճյուղում: Մասնաճյուղի որոշ դասախոսներ (հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված) մասնակցում են տարբեր հետազոտական նախագծերի:

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում: Աջակցում և խրախուսում են նրանց ինքնակրթության և ինքնազարգացման գործընթացները, տրվում են գործուղումներ տարբեր վերապատրաստման դասընթացների մասնակցելու համար (2013 թ. «Մասնագիտական կրթության որակի

ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներ ՌԱԱԿ-ում (6 դասախոս), հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից 2013թ. հուլիսին կազմակերպված ամառային դպրոց՝ «Քանակական հետազոտության մեթոդաբանություն» թեմայով (2 դասախոս), պարգևատրումներ (78 դասախոսներ), աջակցություն դասախոսներին ուսումնական և մեթոդական ձեռնարկների անվճար հրատարակության գործում (4 ձեռնարկ) և այլն):

Մասնաճյուղի դասախոսները մասնակցել են միջազգային և հանրապետական տարբեր գիտաժողովների, որոնց մի մասը նախաձեռնել է մասնաճյուղը.

N	Թեմա	Ձևը	Տարեթիվը	Կազմակերպող	Անցկացման վայրը
1.	ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հիմնադրման 5 - ամյակին նվիրված	***Հանրապետական*** գիտաժողով	2013 թ. հոկտեմ-բեր	ԵՊՀ Ռ/Գ ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն	ԵՊՀ /մասնակցել են մասնաճ. 4 դաս./
2.	«Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ»	Տարածաշրջանա-յին տեղեկատվական և կրթական միջոցառում	2013թ. նոյեմբեր	Եվրամիության կողմից ֆինանսավորվող և WWF-ի կողմից իրականացվող	ԵՊՀ ԻՄ
3.	Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված	***Հանրապետական*** գիտաժողով	2014թ. ապրիլ	Հայոց լեզվի և գրականության ամբիոն	ԵՊՀ ԻՄ
4.	«Հայոց ցեղասպանությունը և արցախյան գոյապայքարը. քաղված դասեր տասնամյակներ անց»	հավաք-քննարկում	2014թ. ապրիլ	«Զարգացման ծրագրերի հայկական կենտրոն» հասարակական կազմակերպու-թյուն և ԵՊՀ ԻՄ	ԵՊՀ ԻՄ

Մասնաճյուղի դասախոսները գտնվում են ԵՊՀ ղեկավարության ուշադրության կենտրոնում: Հաշվետու ժամանակաշրջանում (2014թ. հունիս)՝ ԵՊՀ հիմնադրման 95-ամյակի կապակցությամբ, մասնաճյուղի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արշավիրի Առաքելյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով, ԵՊՀ ԻՄ-ի բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Վարազդատ Նավոյանը՝ ԵՊՀ հուշամեդալով:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում է տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ: Դրան նպաստել են կրեդիտային համակարգով դասավանդողների վերապատրաստման շրջանակներում իրականացված «Լսարանային ցուցադրություն» դասընթացը, 2013թ. դեկտեմբերից ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացվող «Ինչպես պատրաստել արդյունավետ պրեզենտացիաներ» թեմայով թրեյնինգները:

Մասնաճյուղը կարևորում է իրեն վստահված սերնդի բարձրորակ կրթությունը, մտահոգված է և ձգտում է նրանց համար ապահովել կրթական բարձր մակարդակ: Իսկ այդ նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական բարձր որակավորում ունեցող դասավանդողներ: Մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում է գտնվում դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատումն ու բարելավումը, առաջավոր փորձի փոխանցումն ու տարածումը: Դրա համար գործում են մի շարք մեխանիզմներ ու գործիքներ.

- դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ,
- դասալսումների տարբեր ձևեր (փոխադարձ, բաց դասեր, դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից): 2013թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացվել է բաց դասերի շարք, որը նպատակ ուներ ուսումնասիրել մասնաճյուղի դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդները, վերլուծել դասընթացների վարման բովանդակային և տեխնիկական վիճակը, բարձրացնել դասավանդման և կրթական ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը, ամրապնդել մասնաճյուղի նվաճումները: Դասընթացի վարման գնահատման մշակված չափանիշներով գնահատվել և ամփոփվել են բաց դասերի արդյունքները, կազմվել է առաջարկությունների փաթեթ, որը տրվել է բոլոր ամբիոններին: Ներկայացված առաջարկները նպատակ ունեն դասախոսների նպատակային գործունեության միջոցով յուրաքանչյուր դասի, թեմայի, դասընթացի շրջանակներում ուսանողին մղել հաճախելու դասընթացին, նրա մեջ սերմանել վստահություն մասնագիտության պահանջվածության և իր կրթական վերնարդյունքների ձևավորման գործում դասընթացի կարևորության ու դերի նկատմամբ:

- որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք կազմակերպվում են մասնաճյուղում ԵՊՀ-ի աջակցությամբ,
- դասախոսների աշխատանքային անհատական զարգացման պլաններ և աշխատանքային պլաններ յուրաքանչյուր ուստարվա համար, հաշվետվություններ յուրաքանչյուր կիսամյակի համար,
- դասախոսի գիտամանկավարժական գործունեության վարկանիշային գնահատում համապատասխան թերթիկի միջոցով, որը լրացվում է դասախոսի, ամբիոնի վարիչի և դեկանի կողմից: Գնահատման արդյունքները նախատեսվում է ներառել մասնաճյուղի աշխատակիցների խրախուսման կարգի մեջ՝ համապատասխան միավորները ձևավորելիս:
- դասախոսի ինքնագնահատումը դասընթացի փաթեթի միջոցով (այս գործընթացը կիրականացվի 2014թ. սեպտեմբերից),
- դասավանդման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տարբեր համակարգերի կիրառմամբ դասընթացների իրականացման համար խրախուսման տարբեր ձևեր (պարգևատրում, պատվոգիր և այլն):

Նշված գործիքները նպատակային են. նրանց արդյունքները անպայման հաշվի են առնվում թե՛ դասախոսական կազմի ընտրության և թե՛ նրանց խրախուսման գործընթացներում:

Ժողովրդական հին ու նոր արհեստները արվեստին մոտեցնելու և կիրառելի դարձնելու հետևողականությամբ մասնաճյուղի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է Կիրառական արվեստի ֆակուլտետը: Վերջինիս երկու ամբիոններում (Դեկորատիվ կիրառական արվեստի և Գծանկարի, գունանկարի) աշխատող 12 դասախոսներից 5-ը ՀՀ նկարիչների միության և 2-ը ՀՀ դիզայներների միության անդամներ են: 2013-14 ուստարում մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների կողմից ԵՊՀ ԻՄ-ում, Իջևանի քաղաքային պատկերասրահում, ԵՊՀ-ում, ՀՀ նկարիչների միությունում կազմակերպվել են ցուցահենդեսներ՝ նվիրված Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին, Կանանց միջազգային տոնին, Գեղեցկության և մայրության տոնին, Շուշիի ազատագրմանը, ԵՊՀ-ի կազմավորման 95-ամյակին, Ուկրաինայից հրավիրված պատվիրակության առթիվ և այլն, նաև մասնաճյուղի դասախոս Ս.Հովհաննիսյանի անհատական աշխատանքների ցուցադրությունը Իջևանի քաղաքային պատկերասրահում, ուսանողների ավարտական

աշխատանքների ցուցադրությունը ԵՊՀ-ի բակում: Արդյունավետ ուսումնառության ապահովման նկատառումներով կիսամյակի ընթացքում ուսանողների համար կազմակերպվել են պլեներային նկարչության դասեր:

2. Համագործակցություն

Մասնաճյուղն իրականացրել և շարունակում է իրականացնել մի շարք հանրապետական և միջազգային համագործակցային ծրագրեր (վերապատրաստման դասընթացներ, արժեքավոր բուհական դասագրքերի և մեթոդական ուղեցույցների տրամադրում, «ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության բարձր առաջադիմությամբ սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսական օգնություն, բարձր կուրսերի ուսանողների նպատակային պարբերաբար այցելություններ և գործնական պարապմունքներ, ավանդական գոբելենագործության վարպետության դասեր և այլն):

Այդ համագործակցային ծրագրերն իրականացվել են «Թոշակառու մանկավարժներն առանց սահմանների» (GREF) հասարակական կազմակերպության, «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի, Եվրամիության կողմից ֆինանսավորվող և WWF-ի կողմից իրականացվող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու. Ս. Հովսեփյանի հետ.

N	Կազմակերպության անունը	*Ժամանակա-հատվածը*	Համագործակ-ցող օղակը	Համագործակցության արդյունքները
1.	ՀՀ բնապահպանության նախարարության «Զիկատար» ՊՈԱԿ	*2013-14*	Անտառագի-տության ամբիոն	Ամբիոնի բարձր կուրսերի ուսանողների պարբերաբար այցելություններ և գործնական պարապմունքներ
2.	ՀՀ բնապահպանության նախարարության «Զիկատար» ՊՈԱԿ	*2013-14*	Անտառագի-տության ամբիոն	դասընթացներ
3.	«Հայանտառ» ՊՈԱԿ	*2013-14*	Անտառագի-տության ամբիոն	«Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» ծրագրի շրջանակներում, Նոյեմբերյանի անտառտնտեսության Կողբի անտառապետությունում գտնվող «Նոյեմբերյան» տարածքը (մոտ 78 հա) ավարտական աշխատանքի թեմա
4.	ՀՀ ժող. վարպետ Յու.Ս.Հովսեփյան	*2013-14*	Կիրառական արվեստի	Ավանդական գոբելենագործության վարպետության դասեր Մոսկվայից

			ֆակուլտետ	հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու. Ս. Հովսեփյանի կողմից
	Ռեգենի տարածաշրջանի բարձրագույն ուսումնական հաստատություններ	2013թ. սեպտեմբեր	ԵՊՀ ԻՄ	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և Ռեգենի տարածաշրջանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ուղղությամբ նախնական քայլեր ձեռնարկում: Մասնաճյուղ են այցելել Բավարիայի Այխշտետ Ինգոլշտադ համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Հարալդ Պեխլաները, նույն համալսարանի տուրիզմի բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի մի խումբ ուսանողներ, Գերմանիայի Միջազգային Համագործակցության (GIZ) «Քաղաքների ցանց Հարավային Կովկասում» նախաձեռնության շրջանակներում Տավուշի մարզի ու Ռեգենի տարածաշրջանի միջև համագործակցության գերմանական կողմի գործընկերներ Հերբերթ Ուննաշը, Սուսաննե Վագները և Ռեգինա Քաուշինգերը:
5.	«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն	2013թ. հոկտեմբերի	ԵՊՀ ԻՄ	Ընկերության կողմից ուսանողների ուսման վարձավճարների փոխանցում (6 ուսանող)
6.	ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	2013թ. հոկտեմբեր	ԵՊՀ ԻՄ	ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից կազմակերպված «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով եռօրյա միջազգային 2-րդ համաժողովին մասնակցած մի խումբ անվանի հայագետներ՝ Բուրաստան Զուլումյանի (Մոսկվա), Աշոտ Ավետիսյանի (Մոսկվա), Դոնի Ռոստովի հայկական համայնքի ղեկավար Սերգեյ Սայադովի, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի այցը մասնաճյուղ:
7.	ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատուն և Ռուսաստանի Հարավային Դաշնության Ռոստովի համալսարան	2013թ. հոկտեմբեր	Տավուշի մարզպետա-րան	Հանդիսավոր միջոցառում Տավուշի մարզի Մովսես գյուղում:
8.	ՀՀ բնապահպանության նախարարության «Զիկատար» ՊՈԱԿ	2013թ. հոկտեմբեր	Անտառագի-տության ամբիոն	Անտառագետ, կենսաբանական գիտությունների դոկտոր, Կալիֆորնիայի համալսարանի անտառային փորձագետ Կարեն Տեր-Ղազարյանի և անտառագետ, կենսաբանական գիտությունների դոկտոր, 1993-2012թթ. «Բուրեինյան» պետական արգելոցի տնօրեն Ալբերտ Դումիկյանի հանդիպումը մասնաճյուղի բնապահպանություն և բնօգտագործում

				մասնագիտության ուսանողների հետ:
	Եվրոպական միություն	2014թ. մարտ	Տավուշի մարզպետա-րան	Եվրոպական միության պատվիրակության մարզային այցելության շրջանակներում այցելություն ԵՊՀ ԻՄ՝ ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեա, Լիտվայի դեսպան Էրիկաս Պետրիկաս, Հունաստանի դեսպան Իոաննիս Թայիս, Շվեդիայի թագավորության գործերի հավատարմատար Մարտինա Քուիք, ԵՄ պատվիրակության մամուլի և տեղեկատվության հարցերի պատասխանատու Անահիտ Ազատյան և պատվիրակության աշխատակից Բեն Քենարդ
9.	«Օրանժ» հիմնադրամ	***2014թ. ապրիլ***	ԵՊՀ ԻՄ	Հանդիպում «Օրանժ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ֆրանսիս Ժելիբտերի և հիմնադրամի մի քանի ներկայացուցիչների հետ, ԵՊՀ ԻՄ-ի 12 ուսանողների հանձնվեցին կրթաթոշակներ
10.	Մ.Նալբանդյանի անվան Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ	2014թ. ապրիլ	«Մանկավարժության և հոգեբանության» ամբիոն	Միջբուհական համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողները հրավիրվել են Գյումրի
11.	«Հայ-ֆրանսիական բարեկամություն» կազմակերպություն	2014թ. օգոստոս		«Հայ-ֆրանսիական բարեկամություն» կազմակերպության տնօրեն Պոլետ Կուտանի (Ուբուլյանի) կողմից մասնաճյուղի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության մի շարք ուսանողներին հատկացված կրթաթոշակների հանձնում

Շրջանավարտների, տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվում են հանդիպումներ փոխշահավետ համագործակցություն իրականացնելու՝ **մեր լավագույն ուսանողներից և շրջանավարտներից կազմակերպությանն անհրաժեշտ մասնագետներ ընտրելու** նպատակով: Այդ խնդրի իրականացման համար նախատեսվում է 2014-15 ուստարում այդ ուսանողների համար իրականացնել նպատակային արտադրական և մանկավարժական պրակտիկաներ:

Մասնաճյուղի աջակցությամբ մեր ուսանողները և շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց արդյունքում հաշվետու ուստարում 5 շրջանավարտ ընդունվել է աշխատանքի:

Ակտիվացվում և ընդլայնվում է մասնաճյուղի համագործակցությունը նրա հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն:

3. Տեղեկատվական համակարգեր, տեղեկատվական ռեսուրսների զարգացում

Մասնաճյուղն իր հեղինակության պահպանման և ամրապնդման, նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն:

ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի ինտերնետային կայքի /http://www.ijevan.ysu.am/, «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի միջոցով: Մասնաճյուղի մասին տեղեկատվություն և նկարագրություններ են տպագրվում նաև տարբեր տեղեկագրքերում, ժողովածուներում և կայքերում:

Կայքում առանձին բաժնով տեղադրվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ակունք» գիտական հոդվածների բոլոր ժողովածուները (2013-14 ուստարում 2 ժողովածու), շրջանավարտների համար խորհրդատվություններ և հայտարարություններ՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններում:

Մասնաճյուղը համագործակցում է 1-ին լրատվականի թղթակիցների հետ և լուսաբանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները («ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների խնդիրները արտաքին շահակիցների ուշադրության կենտրոնում» (2014թ. փետրվարի 10), «Մասնաճյուղում բացվեց «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը» (2014թ. փետրվարի 24), «Մասնաճյուղում կայացավ Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով» (2014թ. ապրիլի 25) և այլն): Տեղական լրատվական ալիքով նույնպես ներկայացվում են մասնաճյուղում անցկացված միջոցառումները:

Ընթացքի մեջ են Կիրառական արվեստի ֆակուլտետի գործունեության վերաբերյալ բուկլետի պատրաստման, մասնաճյուղի վերաբերյալ տեսաֆիլմ նկարելու գործընթացները:

Հարկ է նշել, որ մասնաճյուղի ծրագրավորողների ուժերով ստեղծվել, տարբեր ստորաբաժանումներում տեղադրվել և կիրառվում են համապատասխան տեղեկատվական համակարգեր.

- Ուսումնամեթոդական վարչությունում՝ ուսանողների տվյալների հաշվառման և մշակման, վերջին 5 տարիների շրջանավարտների հաշվառման և նրանց զբաղվածության վերաբերյալ տվյալների գրանցման և մշակման,
- Ֆակուլտետների դեկանատներում՝ ուսանողների հաճախումների, դասացուցակի կառուցման և քննաշրջանների ամփոփման,
- Անձնակազմի կառավարման բաժնում՝ կադրերի հաշվառման և մշակման,
- Հաշվապահությունում՝ ուսանողների վարձավճարների հաշվառման:

6. Գրադարան

Ուսումնագիտական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար հիմնարար նշանակություն ունի հաստատության գրքային և տեղեկատվական բազան, որը կենտրոնացած է գրադարանում: Տարեցտարի գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է ժամանակակից գրականությամբ, համապատասխան տեղեկատվական տարբեր նյութերով, բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին նպաստում է անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային պաշարների հարստացումը: Ուսանողներն ունեն ինչպես ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի էլեկտրոնային գրքային ֆոնդից /www.lib.ysu.am/, այնպես էլ հանրապետության ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից օգտվելու հնարավորություններ:

Գրադարանն ունի գրապահոց և ընթերցասրահ: Ընթերցասրահն ապահովում է WiFi անվճար ինտերնետ կապ: Ընթերցասրահում կազմակերպված է 456 անուն էլեկտրոնային գրականության հավաքածու՝ դիսկադարան, որը գրադարանային պաշարների մասն է կազմում և ունի ինքնուրույն էլեկտրոնային ունիվերսալ քարտադարան: Էլեկտրոնային պաշարները հասանելի են ընթերցասրահի համակարգիչներից, ինչպես նաև համամասնաճյուղային համակարգչային կենտրոնի թիվ 2 սրահից: Իր ծառայություններով գրադարանն աջակցում է ուսանողների ուսումնառությանը՝ նրանց տրամադրելով մասնագիտական գրքեր, ժողովածուներ,

ամսագրեր, էլեկտրոնային գրքեր: Ընթերցասրահն ունի պատճենահանման և տպման սարքեր:

Գրադարանային ֆոնդում պահանջվող մասնագիտական գրականության բացակայության դեպքում ուսանողներն ստանում են լիարժեք տեղեկատվություն՝ դրա ձեռքբերման վերաբերյալ:

Մասնաճյուղի գրքային ֆոնդը համալրվում է սեփական ձեռքբերումների, նաև նվիրատվությունների հաշվին: 2014թ. հունվարին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհուրդը, որի նպատակն է ապահովել գրադարանի և մասնաճյուղի հիմնական ուսումնական ու գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունը: Խորհուրդն ակտիվ աշխատում է ամբիոնների հետ գրականության նպատակային ձեռքբերման համար: 2013թ. մասնաճյուղը ձեռք է բերել 1059 նոր գիրք, 120 ամսագիր:

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում Մայր բուհը 2013թ. մայիսին գրադարանին նվիրել է ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված 100 գիրք, որոնց թվում են վերջին տարիներին ԵՊՀ հրատարակչության ջանքերով և Գալուստ Գյուլպենկյան հիմնարկության օժանդակությամբ լույս տեսած արժեքավոր գրքեր՝ մենագրություններ, բառարաններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, ինչպես նաև ռուսերեն, անգլերեն լեզվով աշխատություններ:

Հաշվետու ուստարում Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և գրադարանը համատեղ ստեղծել են «Մեծադարան» գրական-գեղարվեստական ակումբը, որի կազմում ընդգրկված են մասնաճյուղի շնորհալի ուսանողներ:

Գրադարանն ակտիվ համագործակցում է ամբիոնների և ուսանողական կառույցների հետ՝ պլանավորելով և իրականացնելով տարբեր միջոցառումներ՝ գիտական զեկուցումներ, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, գրքերի շնորհանդեսներ և այլն.

1. «Մեծադարան» խորագիրը կրող միջոցառումների ծրագիր՝ նվիրված մեծ քնարերգու Ավետիք Իսահակյանին (2014թ. մարտ),
2. մասնաճյուղի պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Ասքանազի Նահապետյանի գրքերի շնորհանդես (2014թ. մարտ),

3. Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոս Լևոն Լաճիկյանի «Խաչվող ճանապարհներ» գրքի անգլերեն թարգմանության և նրա կազմած «Հայաստան» բանաստեղծական ժողովածուի շնորհանդես (2014թ. մարտ),
4. բաց դաս՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման փուլերի, նոր դարաշրջանի հզորագույն համակարգիչների՝ սուպերհամակարգիչների պատմության ու նրանց կիրառությունների վերաբերյալ (2014թ. ապրիլ),
5. բաց դաս՝ «Քրիստոնեական բարոյականության արժեքային համակարգը» թեմայով, որը ներառում էր «Տաբու (արգելք)», «Իրավունք թե՞ բարոյականություն», «Տասը պատվիրաններ», «Ոսկե կանոն» ենթամասերը (2014թ. ապրիլ):
6. բաց դաս՝ «Սասնա ծռեր» էպոսը որպես հայ մարդու հոգեվիճակ՝ արտացոլված հեղինակի նկարագրդումներում» թեմայով (2014թ. ապրիլ):

Մասնագիտական գրականությունից ուսանողների և դասավանդողների պահանջարկը բավարարելու համար գրադարանը տարեկան երկու անգամ ամբիոններից հավաքագրում է անհրաժեշտ գրականության ցանկը և կազմակերպում դրանց հնարավոր ձեռքբերման գործընթացը:

Վիճակագրական վերլուծություն իրականացնելու նպատակով 2013թ. սեպտեմբերից գրադարանը վարում է իր կողմից իրականացված տարատեսակ ծառայությունների ամենօրյա հաշվառում, որում ներկայացվում է մասնագիտական, գեղարվեստական և էլեկտրոնային գրականությունից, ինտերնետ կապից օգտվող ուսանողների և դասախոսների քանակը:

Ամենաշատ պահանջարկ ունեցող մասնագիտական գրականության վերաբերյալ պարբերաբար կատարվում են գրանցումներ:

7. Հասարակայնության հետ կապ

Հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավման համար իրականացվել են մի շարք գործընթացներ: Մասնաճյուղի դրական հեղինակության պահպանման և ամրապնդման, նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով մասնաճյուղն իրականացնում է տեղեկատվության տարածման և մասնաճյուղի գովազդային-

լրատվական, քարոզչական բազմազան մեխանիզմներ: Մասնաճյուղն ունի հանրային կապերի ոլորտում իր քաղաքականությունը (27.05.2014):

Մասնաճյուղի տնօրենի, կառուցվածքային ստորաբաժանումների, հասարակական միավորումների (արհբյուրո, ուսանողական գիտական ընկերություն, ուսանողական խորհուրդ և այլն), այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկման աշխատանքները 2012 թվականից համակարգում և իրականացնում է հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանման, թափանցիկության և տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով 2011թ. հոկտեմբերի 1-ից գործում է մասնաճյուղի ինտերնետային կայքը /http://www.ijevan.ysu.am/, “Facebook” սոցիալական ցանցում գործում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջը:

8. Ուսանողական կառույցներ, աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ

Մասնաճյուղում ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման ուղղությամբ իրենց ներդրումն ունեն ուսանողական համապատասխան կառույցները: Ուսանողական խորհուրդը համակարգված աշխատում է ուսանողների հետ՝ նրանց իրազեկելով իրենց իրավունքների, պարտականությունների, գործող կրթական համակարգի և մասնաճյուղի ուսանողական կյանքի մասին: Նրանք կազմակերպում են բազմաթիվ միջոցառումներ՝ տարբեր տոների, հիշատակների նվիրված, մասնակցում են նաև ԵՊՀ ուսանողական ձեռնարկումներին, տարբեր սպորտային և մշակութային միջոցառումների՝ դրևորելով մարզական և մշակութային լավ արդյունքներ:

2014թ. փետրվարին մասնաճյուղում բացվել է «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը, որի նպատակը երիտասարդության, ուսանողության շրջանում հայրենասիրական ոգին բարձրացնելը, արցախյան ազատամարտում ընկած հայորդիների հիշատակը վառ պահելն ու ազգային մտածողությամբ երիտասարդներ դաստիարակելն է:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմակերպած ամենամյա «Հայկյան 2013» մրցանակաբաշխության «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում հաղթող է ճանաչվել մասնաճյուղի ՈՒԳԸ-ն:

Մասնաճյուղի ուսանողները ակտիվ մասնակցում են տարաբնույթ մրցույթների և ցուցաբերում բավականին լավ արդյունքներ:

2013թ. նոյեմբերին Ուսանողների միջազգային օրվան նվիրված «ԵՊՀ լավագույն ուսանող-2013» ամենամյա մրցանակաբաշխությունում հաղթող 15 ուսանողների շարքում էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի մի ուսանողուհի:

Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղը ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականացնում է «Beeline Scholarship» ծրագիրը: Այն նպատակ ունի աջակցել Հայաստանի պետական բուհերի վճարովի համակարգում սովորող ուսանողներին: 2014թ. փետրվարին ամփոփվել են մրցույթի արդյունքները: «Beeline Scholarship» ծրագրին մասնակցելու հայտ էր ներկայացրել 568 ուսանող: Ծրագրի երկրորդ փուլում 178 ուսանողից ընտրվել է 95 հաղթող: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից երկրորդ փուլ է անցել Բնական գիտությունների ֆակուլտետի «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության II կուրսի մի ուսանողուհի, որի 1 կիսամյակի ուսման վարձը կտրամադրի «Beeline» ընկերությունը:

2014թ. մայիսին մասնաճյուղի ուսանողները մասնակցել են «WRITE ON! COMPETITION 2014» միջազգային մրցույթին (12 պետությունների մասնակցությամբ), որի ազգային փուլում մեր 3 ուսանողուհիները գրավել են 1-ին և 2-րդ տեղերը, իսկ միջազգային փուլում մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության մեր ուսանողուհին գրավել է 1-ին տեղը:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ ուսանողների կողմից կազմակերպվել են բազմաթիվ հետաքրքիր, ճանաչողական միջոցառումներ.

N	Միջոցառման նպատակը	Ժամանակը	Կազմակեր-պող կառույցը	Արդյունքը
1	Հայ ականավոր բանաստեղծ Պարույր Սևակի ծննդյան օրվան նվիրված	2014թ. հունվարի 24	ՀԼԳ ամբիոն	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մի խումբ ուսանողների այցելություն-ուխտագնացություն դեպի Պարույր Սևակի տուն-թանգարան և շիրիմ
2	Մայիսյան հերոսամարտերին նվիրված	2014թ. մայիսի 8	Հում ԳՖ, ՈՒԳ	միջոցառում
3	Երկրապահի օրվա	2014թ.		ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ»

	առթիվ հարգանքի տուրք զոհված ազատամարտիկների հիշատակին	մայիսի 8		ռազմահայրենասիրական ակումբի անդամները և պատասխանատուները այցելեցին Ազատության հրապարակում գտնվող հուշարձան
4	«Ոսկեդարյա լեզուն հայոց»	2014թ. մայիսի 8	ՀԼԳ ամբիոն	գրական-գեղարվեստական միջոցառում
5	բանաստեղծուհի Մետաքսեին նվիրված	2014թ. մայիսի 14	Օտլ ամբիոն	գրական-երաժշտական ցերեկույթ
6	“Куда уходит детство” մարդու ամենաանաղարտ, ամենաերանելի հասակին՝ մանկությանը նվիրված	2014թ. մայիսի 16	Օտլ ամբիոն	ռուսերեն լեզվով գրական-երաժշտական միջոցառում
7	Մայիսյան հերոսամարտերին նվիրված	2014թ. մայիսի 28	ՈւԽ	«Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի անդամների կազմակերպել են միջոցառում Իջևանի զորամասերից մեկում

2013թ. նոյեմբերին «Միասին-2» խաղաղասիրական ծրագիրը, որը ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ համատեղ իրականացնում են «Եվրոպական ինտեգրացիա» (Երևան), «Հումանիտար հետազոտությունների հանրություն» (Բաքու) և «Ժողովրդական դիվանագիտության ինստիտուտ» (Ստեփանակերտ) հասարակական կազմակերպությունները, հնարավորություն էր ընձեռնել սահմանամերձ շրջանների երիտասարդների միջև երկխոսություն սկսելու համար:

Ծրագրի շրջանակներում «Ինչպիսի՞ն են նրանք՝ սահմանից այն կողմ» ընդհանուր խորագրի ներքո Իջևանի և Ղազախի երիտասարդների միջև տեղի է ունեցել վիրտուալ հանդիպում (Skype կոնֆերանս):

Մասնաճյուղը հանրությանը ներկայացնելու գործում իր առանձնահատուկ տեղն ունի Կիրառական արվեստի ֆակուլտետը, որի դասախոսները և ուսանողները մշտապես մասնակցում են արվեստի տարբեր փառատոնների ու մրցույթների և իրենց դրսևորում ամենալավ, տաղանդավոր կողմերով:

2013թ. սեպտեմբերի 20-ին Գյումրիում իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպված “ART EXPO-2013” ցուցահանդեսը, որում ընդգրկված են եղել հանրապետության բոլոր մարզերը: Տավուշի մարզից ցուցահանդեսին ներկայացել են մարզի կրթության, սպորտի, երիտասարդության հետ հարցերի վարչության պետը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի

ֆակուլտետի դեկանը, դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի ասիստենտը, ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի և բակալավրի 4-րդ կուրսի ուսանողներ:

2013թ. սեպտեմբերի 27-ին Երևանում տեղի է ունեցել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպված Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տուրիստական էքսպո: Այն նպատակ ուներ վերհանել ներգնա զբոսաշրջային ներուժը Հայաստանում, բարձրացնել հանրության իրազեկվածությունը զբոսաշրջության և դրա սոցիալական, մշակութային, քաղաքական ու տնտեսական արժեքների կարևորության վերաբերյալ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից էքսպոյին մասնակցեցին Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի ասիստենտը և նույն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները, որոնք ներկայացրին իրենց և ֆակուլտետի ուսանողների աշխատանքներից (գոբելեն, բատիկա, կերամիկական աշխատանք, փայտի գեղարվեստական մշակում և այլն):

2013թ. հոկտեմբերի 1-ին Երևանում «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացված համայնքային երկրորդ փառատոնին մասնակցել են քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրում ընդգրկված 43 համայնքներ, այդ թվում՝ Իջևան համայնքը: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից փառատոնին իրենց ստեղծագործություններով ներկայացել էին Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորտատիվ կիրառական արվեստի ամբիոնի ասիստենտը և նույն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները:

Յուրաքանչյուր ուստարում մասնաճյուղի ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպվում են ինտելեկտուալ խաղեր: 2013-14 ուստարում 4 ֆակուլտետներում խաղին մասնակցել են 22 թիմեր: Ֆակուլտետներում երբեմն կազմակերպվում են նաև անհատական ինտելեկտուալ խաղեր:

Վերջաբան

Մասնաճյուղը ԵՊՀ-ի անմիջական աջակցությամբ և իր գործունեությամբ նպաստում է տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքների բավարարմանը և ձգտում իր ուրույն տեղն ապահովել բարձրագույն կրթություն

իրականացնող կազմակերպությունների շարքում: Այդ փաստի վառ վկայությունն է բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի չափանիշներով մասնաճյուղի ստացած գնահատականը:

Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգը, բուհերը բաժանելով 9 խմբերի, կատարել է նրանց վարկանիշավորում՝ ըստ 9 չափորոշիչների:

2013-14 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ընդգրկված էր 4-րդ՝ «Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող» բուհերի խմբում:

Ընդհանուր վարկանիշով ***մասնաճյուղն առաջինն էր*** նույն խմբում ներառված 14 բուհերի մեջ:

Առաջինն էր նաև 3-րդ չափորոշիչով («Ուսումնառության արդյունքներ»):

2-րդ չափորոշիչով («Ուսանողներ») մասնաճյուղը զբաղեցրել է յոթերորդ տեղը:

4-րդ չափորոշիչով («Միջազգային ուղղվածություն») մասնաճյուղը զբաղեցրել է 4-րդ տեղը:

5-րդ չափորոշիչով («Գիտահետազոտական աշխատանք») մասնաճյուղը գրավել է 2-րդ տեղը:

6-րդ չափորոշիչով («Դասավանդման գործընթաց») մասնաճյուղը զբաղեցրել է 5-րդ տեղը:

7-րդ չափորոշիչով («Հաստատության կարողություններ») մասնաճյուղը զբաղեցրել է 6-րդ տեղը:

8-րդ չափորոշիչով («Աշխատանքային շուկա») մասնաճյուղը գրավել է 3-րդ տեղը:

9-րդ չափորոշիչով («Ընդհանուր գնահատումներ») մասնաճյուղը զբաղեցրել է 8-րդ տեղը:

Այսպիսով՝ ներկայացվեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2013-14 ուսումնական տարվա գործունեության ամփոփ պատկերը: Նոր ձեռքբերումները ոգևորում ու հիմք են ծառայում հետագա գործունեության բարելավման և առավել արդյունավետ կազմակերպման համար: